



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2015 թվականի N 855 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման N 5 հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող

միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման N N 11 և 12 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն N N 2, 3 և 4 հավելվածների:

3. «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» և «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթները կազմակերպելու և անցկացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը 2015 թվականի ինն ամսում հատկացնել 36520.0 հազ. դրամ, որից՝

1) «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի համար՝ 16945.3 հազ. դրամ, որից 1150.3 հազ. դրամ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով և 15795.0 հազ. դրամ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» հոդվածով.

2) «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի համար՝ 19574.7 հազ. դրամ, որից 1885.1 հազ. դրամ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով և 17689.6 հազ. դրամ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» հոդվածով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. օգոստոսի 4  
Երևան



Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2015 թվականի  
հուլիսի 30-ի N 855 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

Բաժինը	Խումբը	Դասը	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)	
				ինն ամիս	տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ	0.0	0.0
			այդ թվում՝		
08			ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	(36,520.0)	(36,520.0)
			այդ թվում՝		
	01		Հանգստի և սպորտի ծառայություններ	(36,520.0)	(36,520.0)
			այդ թվում՝		
		01	Հանգստի և սպորտի ծառայություններ	(36,520.0)	(36,520.0)
			այդ թվում՝		
			07. «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում	(36,520.0)	(36,520.0)
			ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	(36,520.0)	(36,520.0)
			որից՝		
			«Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» հոդված	(36,520.0)	(36,520.0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	36,520.0	36,520.0
			այդ թվում՝		
	01		ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ	36,520.0	36,520.0
			այդ թվում՝		
		01	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	36,520.0	36,520.0
			01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	36,520.0	36,520.0
			ՀՀ կառավարություն	36,520.0	36,520.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ  
ՏԵՂԱԿԱԼ

Գ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2015 թվականի  
հուլիսի 30-ի N 855 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ  
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.23 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

<b>Չափորոշիչներ</b>		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)			
		ոչ ֆինանսական ցուցանիշներ		ֆինանսական ցուցանիշներ	
		ինն ամիս	տարի	ինն ամիս	տարի
ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները					
1. Քաղաքականության միջոցառումներ					
1.1 Ծառայություններ					
<b>Ծրագրային դասիչը</b>		<u>Անվանումը</u>			
		«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում			
1163	ԱԾ02	<u>Նկարագրությունը</u>			
		ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում			
Քանակական		Մրցույթի մասնակից ընտանիքների թիվը	0	0	
		Մրցածների թիվը	0	0	
Որակական		Մշակված չէ	X	X	
Ժամկետայնության		Մշակված չէ	X	X	

Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)		X	X	(36,520.0)	(36,520.0)
<u>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</u> 1163 Մանկապատանեկան և մասսայական սպորտի ծրագիր					
<u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u>					
Բնակչության առողջության ամրապնդում, անհատի ներդաշնակ զարգացում, առողջ ապրելակերպի ապահովում					
Ծառայություն մատուցողի անվանումը «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտրված կազմակերպություն					
<b>Ծրագրային դասիչը</b>		<u>Անվանումը</u>			
1163	ԱԾ05	«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթ			
		<u>Նկարագրությունը</u>			
		ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթ			
Քանակական	Մրցույթի մասնակիների թիվը	200	200		
Որակական	Մշակված չէ	X	X		
Ժամկետայնություն	Մշակված չէ	X	X		
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)		X	X	16,945.3	16,945.3
<u>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</u> 1163 Մանկապատանեկան և մասսայական սպորտի ծրագիր					
<u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u>					
Բնակչության առողջության ամրապնդում, անհատի ներդաշնակ զարգացում, առողջ ապրելակերպի ապահովում					
Ծառայություն մատուցողի անվանումը «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտրված կազմակերպություն					
<b>Ծրագրային դասիչը</b>		<u>Անվանումը</u>			
1163	ԱԾ06	«Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթ			
		<u>Նկարագրությունը</u>			
		ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի անցկացում			
Քսսանակական	Մրցույթի մասնակից մարզական նախադպրոցական հիմնարկներ թիվը	250	250		

Քանակական	Մրցածների թիվը	6	6		
Որակական	Մշակված չէ	X	X		
Ժամկետայնության	Մշակված չէ	X	X		
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)		X	X	19,574.7	19,574.7
<u>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</u>					
1163 Մանկապատանեկան և մասսայական սպորտի ծրագիր					
<u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u>					
Բնակչության առողջության ամրապնդում, անհատի ներդաշնակ զարգացում, առողջ ապրելակերպի ապահովում					
Ծառայություն մատուցողի անվանումը					
«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտրված կազմակերպություն					

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ  
ՏԵՂԱԿԱԼ

Գ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 3  
ՀՀ կառավարության 2015 թվականի  
հուլիսի 30-ի N 855 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ  
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐԸ

Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային  
խմբավորումը

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը	Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը	2015 թ. պետական բյուջե
ծրագիրը	միջոցառումը	(բաժինը/խումբը/դասը)		(հազ. դրամ)
<b>1163</b>			<b>ԾՐԱԳԻՐ</b>	
			Մանկապատանեկան և մասսայական սպորտի ծրագիր <u>Ծրագրի նկարագրությունը</u>	0.0
			Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչության և առողջ ապրելա- կերպի արմատավորմանն ուղղված միջոցառումների իրականացում, հանրապետական մակարդակով տարբեր մարզական խաղերի և փառատոների կազմակերպում և անցկացում	
			<u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u>	
			Բնակչության առողջության ամրապնդում, անհատի ներդաշնակ զարգացում, առողջ ապրելակերպի ապահովում	
<b>Քաղաքականության միջոցառումներ. ծառայություններ</b>				
	ԱԾ 02	08.01.01	«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում <u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u>	(36520.0)
			ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում	
			<u>Ծառայություն մատուցողի անվանումը</u>	
			«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտրված կազմակերպություն	
	ԱԾ 05	11.01.01	«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթ <u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u>	16945.3

			<p>ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթ</p> <p><u>Ծառայություն մատուցողի անվանումը</u></p> <p>«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտրված կազմակերպություն</p>	
	ԱԾ 06	11.01.01	<p>«Լավագույն մարզական նախա- դպրոցական հիմնարկ» մրցույթ</p> <p><u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u></p> <p>ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթ</p> <p><u>Ծառայություն մատուցողի անվանումը</u></p> <p>«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտրված կազմակերպություն</p>	19574.7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ  
ՏԵՂԱԿԱԼ

Գ. ԴՈՒՄԱՆՅԱՆ



Հավելված N 4  
 ՀՀ կառավարության 2015 թվականի  
 հունիսի 30-ի N 855 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ  
 N 12 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

Կողը	Անվանումը		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)				
			գնման ձևը	չափման միավորը	միավորի գինը	քանակը	գումարը (հազ. դրամ)
<b>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</b>							
Բաժին N 11	Խումբ N 01	Դաս N 01	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ				
<b>ՄԱՍ III. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>						<b>3,035.4</b>	
92621110-1	Սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ		ՊԸ	դրամ	1885.1	1	1,885.1
92621110-2	Սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ		ՊԸ	դրամ	1150.3	1	1,150.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
 ԴԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ  
 ՏԵՂԱԿԱԼ

Գ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

